լական, ծիսա-տոնական կողմերը:

2. Հայերի սննդի մեջ հնագույն ժամանակներից առ այսօր, մշակովի բույսերի հետ մեկտեղ կարևոր տեղ են գրավում վայրի բանջարները, որին նպաստել է Հայկական լեռնաշխարհի բնության բազմազանությունը: Պայված ց հայոց մեջ օգտագործվող շուրջ երեք հարյուր տեսակի վայրի բանջար:

3. Հայերի կենցաղում վայրի բանջարեղենի գործածությունը խիստ բազմազան է: Այս կամ այն տեսակը ավանդաբար օգտագործվել է՝ թարմ վիճակում, թթու դրած, չորացրած, եփած և տապակած:

Ազգագրական նյութերը բացահայտում են տարբեր տեսակի վայրի բանջարների ընտրության, վերամշակման և պահպանման գործում հարյուրամյակների ընթացքում ժողովրդի ձեռք բերած հմտությունները:

4. Վայրի բանջարները թե անցյալում, թե այժմ օգտագործվում են ինչպես հիմնական կերակուր, այնպես էլ հիմնական կերակրի բաղադրիչ մաս, համեմունք, աղցան և այլն: Տարբեր պատմաազգագրական շրջաններում առկա են կերակրատեսակների պատրաստման չափերի տարբերությունների յուրահատկություններ, միաժամանակ դրսևորելով համազգային գծեր:

5. Վայրի բանջարեղենի օգտագործումն ըստ բնույթի, նպատակահարմար է ներկայացնել հետևյալ ձևով՝ որպես առանին կերակուր, որպես ծիսա-տոնական ուտեստ և որպես բուժամիջոց: Նշված տեսանկյունով համեմատական ուսումնասիրությունը նպաստում է ոչ միայն ժողովրդի նյութական կյանքի բազմակողմանի հետազոտությանը, այլև երևան է հանում ժողովրդական գիտելիքների ողջ հարստությունը և հավատալիքների յուրատիպությունը:

Ք.Ս.ԽԱՆԱՂՅԱՆ

ՏՆԱՅԻՆ ՍՐԲԵՐԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԸ ՀԱՅՈՑ ՄԵՋ

/ Ըստ Ապարանի և Արագածի շրջանների նյութերի/

1. Հայ ժողովրդի հավատալիքների շարքում վերապրուկային կարգով տակավին հարատևում է տնային սրբերի պաշտամունքը:

Տվյալ հաղորդման մեջ քննվելու է տնային սրբերի միայն

մեկ տեսակը՝ արտահայված գրի և գրքի պաշտամունքով:

2. Տնային սրբերը պատմա-ազգագրական տարբեր շրջաններում տարբեր են. դրանց մեջ առանձնահատուկ տեղ է գրավում գրքերի, հմայիլների, անգամ գրավոր թերթիկների պաշտամունքը:

3. Տնային սրբերն ունեն որոշակի ֆունկցիա՝ բուժում են հիվանդներին, ընդ որում հիվանդությունները որոշակիորեն զատված են ըստ ,,սրբերի,,: Սրբերը հովանավորում են սերունդը, ունեցվածքը և այլն:

4. Սրբերի խնամակալությամբ զբաղված են գրեթե բացառապես կանայք:

5. Վաղ անցյալում, ըստ երևույթին, լինելով հիմնականում տոհմային սրբեր, հետագայում դրանք վերածվել են տնային սրբերի, պահպանելով նախկին ֆունկցիաները, բայց նեղացնելով ազդեցության ոլորտը:

6. Այս կարգի սրբերի պաշտամունքը Խորհրդային Հայաստանում հիմնականում պահպանվել է ազգագրական այն խմբերի մեջ, որոնց նախնիները 19-րդ դարի սկզբներին գաղթել են Արևմտյան Հայաստանից և համախմբված տարաբնակվել:

Բ Ա Ն Ա Հ Յ Ո Ւ Ս Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ա. Մ. ՆԱՋԻՆՅԱՆ

ՄՆԱՀԱՎԱՏԱԿԱՆ ԶՐՈՒՅՑՆԵՐ ՀԱՐ ԵՎ ԲԱՐԻ ՈԳԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ / ԸՍՏ ՀԱՅ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ/

1. Սնահավատական զրույցները նշանակալից տեղ են գրավում հայ ազգագրական-բանահյուսական ժեռագիր և տպագիր սկզբնաղբյուրներում: Այդ զրույցները հավաքվել, հրատարակվել և հետազոտվել են որպես ազգագրական օժանդակ, հարակից նյութ /հավատք-սնոտիապաշտություն/:

2. Սնահավատական զրույցը հայ բանավոր-պատմողական արձակի տարածված տեսակներից է, որը հիշյալ ժամանակի ընդհանուր հատկանիշներով հանդերձ տարբերվում է որոշակի կառուցվածքային-ձևաբանական, գաղափարական և կիրառական առանձնահատկություններով: